

Տ. ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ՔԱՐԱՄՅԱՆ

Ծնվել է 1963 թ. հուլիսի 20-ին Մարտունու շրջանի Երանոս գյուղում:

1969—1979 թթ. սովորել և ավարտել է տեղի Պերճ Պոռշյանի անվան միջնակարգ դպրոցը:

1979—80 ուս. տարում սովորել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական մասնաճյուղում, ապա, 1980 թ., ընդունվել է Էջմիածնի հոգևոր ճեմարան և համատեղ 1985 թ. հեռակա կարգով ավարտել մանկավարժական ինստիտուտը:

1982—84 թթ. ծառայել է Խորհրդային բանակում, որից հետո նորից ուսումը շարունակել է հոգևոր ճեմարանում: 1988 թ. մայիսի 12-ին, ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սահթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ և նշանակվել «Ալեք և Մարի Մանուկյան Գանձատան» տնօրեն:

1989 թ. մարտի 15-ին պաշտպանել է ավարտաճառ՝ Եփրեմ Սասեցի Աֆապարհյան կաթողիկոսի «Մեկնութիւն Յովհաննու մարգարէի» թեմայով և արժանացել «լավ» գնահատականի:

1989 թ. հունիսի 11-ին, ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1989 թ. օգոստոսի 25-ից նշանակվել է Սիսիանի Ս. Հովհաննես եկեղեցու հոգևոր հովիվ:

1992 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա.-ի կողմից նշանակվել է Սյունաց թեմի փոխառաջնորդ՝ Գորիս քաղաքում:

1993 թ. ապրիլի 3-ից նշանակվել է Արարատյան հայրապետական թեմում որպես առաջնորդական փոխանորդի օգնական և Վեհանի ավագանի հոգևոր տեսուչ:

1994 թ. հունիսի 3-ին պաշտպանել է իր վարդապետական թեզը՝ Առաքել Սյունեցու «Ամենայն չար տանջելի է» թեմայով: